

ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՆԱՅ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սույն աշխատությունը մի փորձ է նորովի մեկնաբանելու Կեղծ-Զաքարիա¹ Հռետորի ասորական ժամանակագրության (VI դար) հանրահայտ դրվագը՝ Հոնաց աշխարհում հայերի ծավալած առաքելական գործունեության մասին², խոսքը վերաբերում է Հյուսիսային Կովկասի մերձկասպյան նահանգներին, որոնք V—VII դդ. միավորված էին սավիրական ցեղային միության մեջ։ Այդ ցեղերի ազգաբանությունը դեռևս լիովին պարզված չէ. ենթադրվում է, որ նրանց մեջ կարևոր դեր է խաղացել իրանական տարրը։

Դրվագն արժանացել է մի շարք հետազոտողների՝ Ն. Ադոնցի, Ն. Պիգուլևսկայի, է. Շտայնի, Ա. Վասիլևի, Բ. Ուլուբաբյանի և այլոց ուշադրությանը, իմաստավորվելով նրանց կողմից պատմական իրադարձությունների լայն կրտավի վրա³։ Նրանց տեսակետներին մենք կանդրադառնանք համապատասխան տեղում, սակայն նախքան բուն նյութին անցնելը հարկ ենք համարում ներկայացնել ասորական ժամանակագրության խնդրո առարկա հատվածը մեր թարգմանությամբ։

«Արդ, հոների երկրում մոտ քսան և ավելի տարիներ առաջ իրենց լեզվով դպրություն ստեղծվեց։ Իրողությունը, որ կատարվեց Տիրոշ կամֆով, ես պատմում եմ ինչպես լսել եմ վստահելի մարդկանցից՝ Հովհաննես Ռեշայնացուց, որ Ամիդի մոտակայքի Բեթ-Իսխակունի վանքից է, և Թովմա կաշեգործից։ Ավելի քան հիսուն տարի առաջ նրանք գերվել էին Կավատի կողմից⁴ և, հասնելով Պարսից երկիր, վաճառվել էին հոներին ու տարվել դարպասներից այն կողմ։ Նրեսուն տարուց ավելի մնալով նրանց երկրում, նրանք ամուսնացան և

¹ Կոչում ենք Կեղծ-Զաքարիայի, որովհետև, ինչպես պարզված է, ժամանակագրության միայն մի մասն է պատկանում Զաքարիա Միտիլենացուն. մնացածը VI դարի ասորի մի բանաբաղի գործն է։

² Historia Ecclesiastica Zachariae Rhetori vulgo adscripta, II. Edidit E. W. Brooks. „Corpus Scriptorum Christianorum Orientalium (—CSCO)“ 84, Syr. 39, Louvain, 1921, p. 215—217.

³ Ն. Ադոնց, Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում (Զ. դար), «Արարատ», 1902, էջ 262—274. Н. Пагулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, стр. 86—87, 166—167. E. Stein, Iustinus I, „Paulys Realencyclopädie der Classischen Altertumswissenschaft“, X (2), S. 1326. A. A. Vasiliev, Justin the First. An Introduction to the Epoch of Justinian the Great, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1950, p. 250—251. Բ. Ուլուբաբյան, Ոսկե շրթա, Երևան, 1979, էջ 96—104, Հարցին անդրադարձել են նաև Մ. Աղավնունին և Հ. Քյուրտյանը. տե՛ս Մ. Աղավնունի, Հոնաց աշխարհին հայ ավետարանիչները, «Սիոն», 1931, էջ 333—336, Հ. Քյուրտյան, Զաքարիա Հռետորի վկայությունները Հայաստանի և Ադվանքի մասին, «Սիոն», 1967, էջ 250—252.

⁴ Խոսքը վերաբերում է Կավատ 1-ի 502—503 թթ. արշավանքի հետևանքով Բյուզանդական կայսրության արևելյան նահանգներից քշված գերիներին։

երեսներ ունեցան, սույս այդքան ժամանակից հետո վերադարձան և իրենց բերանով մեզ պատմեցին հետևյալը.

Այն բանից հետո, երբ հոռոմների երկրի գերիները բռնեցին հոռոմների կողմից, որոնց երկրում նրանք մնացին երեսունչորս տարի, հրեշտակը հայտնվեց Կարդոստ անունով մի մարդու՝ Առան երկրի եպիսկոպոսին, ինչպես ինքը եպիսկոպոսն է պատմել, և ասաց նրան. «Երեք բարեպաշտ փառանքների հետ զնա դաշտ և ստացիր ինձնից հոգիների Տիրոջ ուղարկած պատգամները, քանի որ ես պահապանն եմ հոռոմների երկրից Հոնաց աշխարհը բերված գերիների, որոնք աղոթեցին առ Աստված, և նա ինձ պատվիրեց, թե ինչ ասեմ քեզ»:

Եվ երբ այս Կարդոստը, որ հունարեն բարգմանվում է Թեոկլետոս, իսկ արամեերեն՝ Աստվածակոչ, երեք փառանքների հետ փութապես դաշտ զնաց, հրեշտակը նրանց ասաց. «Ելեք գնացեք հեթանոսների երկիրը և մկրտեցեք մահվան որդիներին. փառանքներ ձեռնադրեցեք նրանց համար, տվեք [հավատի] խորհուրդները և ֆաշալեբեցեք նրանց: Ահա ես ձեզ հետ եմ և այնտեղ ձեզ կաշակցեմ: Ինչ հեթանոսների մեջ հրաշքներ կգործեք և կգտնեք ձեր գործունեության համար անհրաժեշտ ամեն ինչ»: Նրանց հետ գնացին ևս չորս հոգի: Եվ մի երկրում, որտեղ հանգիստ չկար, այս յոթ փառանքներն ամեն երեկո գտնում էին մի օթևան, յոթ նկանակ և մի կուժ ջուր: Նրանք ոչ թե դարպասներով մտան, այլ անցան լեռներով: Երբ տեղ հասան, այս բաները պատմեցին գերիներին: Ապա շատերին մկրտեցին, հոռոմից էլ ոմանց վարդապետեցին և, այնտեղ մնալով յոթ տարի, հոռոմի լեզվով դպրություն ստեղծեցին:

Այդ ժամանակ պատահեց, որ Պրոքոսը կայսեր կողմից դեսպանությամբ ուղարկվեց այնտեղ՝ հեթանոսների դեմ պատերազմելու համար նրանցից զինվորներ վարձելու նպատակով: Երբ նա հոռոմից լսեց այդ սրբերի մասին, մանավանդ տեղեկացավ նաև գերիներից, փութապես ցանկացավ տեսնել նրանց: Եվ երբ տեսավ ու ստացավ նրանց օրհնությունը, այդ հեթանոսների աչքի առջև մեծ պատիվ տվեց նրանց: Իսկ մեր կայսրը, նրանից տեղեկանալով վերը նկարագրված իրողությանը, որ կատարվեց Տիրոջ կամով, հոռոմեական տիրապետության տակ գտնվող մոտակա ֆաղափներից նրանց ուղարկեց երեսուն ջորի՝ բեռնավորված ալյուրով, գինով, յուղով, կտավով, այլևայլ մթերքներով ու սրբազան անոթներով: Պրոքոսը նրանց նվիրեց նաև այդ անասունները, որովհետև հավատացյալ ու բարի մարդ էր:

Նույնպիսի բարեգործության նախանձախնդիր՝ տասնչորս տարի հետո իր մի փանի փառանքների հետ հոծարակամ և հույժ խանդավառված այնտեղ մեկնեց նաև մի ուրիշ հայ եպիսկոպոս, որի անունը Մակար⁵ էր: Նա աղյուսից

⁵ Ժամանակագրության առաջին հրատարակության մեջ (J. Land. Anecdota Syriaca, vol. III, Leyden, 1870, p. 2—340) այս անունը գրված է Maq ձևով: Անգլիացի թարգմանիչներ Ֆ. Համիլտոնը և Ե. Բրուքսը նշում են, որ իրականում ձևագրում ընթերցվում է Maqu, այդ պատճառով իրենց թարգմանության մեջ հարցականով գրել են Maku ձևը (տե՛ս The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene, translated into English by F. J. Hamilton and E. W. Brooks, London, 1899, p. 330): Պակայն Նույն Բրուքսը, 1921 թ. վերահրատարակելով ասորական ընթերցումը, անունը ներկայացրել է արդեն Macqar ձևով և իր լատիներեն թարգմանության մեջ այն տառադարձել է Macarius (տե՛ս Historia Ecclesiastica Zachariae Rhetori vulgo adscripta, II. Interpretatus est E. W. Brooks, „CSCO“ 88, Syr. 42, Louvain, 1924, p. 146): Արմեն հեռատակել, որ Մակար ուղղումը գեո 1902 թ. ենթադրաբար առաջարկել է Ն. Ադոնցը (տե՛ս Ն. Ադոնց, Ջշվ. աշխ., էջ 270):

եկեղեցի կառուցեց, բույսեր տնկեց, զանազան սերմեր ցանեց, հրաշքներ գործեց ու մկրտեց շատերին: Երբ այդ ժողովուրդների իշխողները ինչ-որ նորություն տեսան, հույժ ուրախացան և, հիանալով այդ մարդկանցով, պատվեցին նրանց: Յուրաքանչյուր ով նրանց կանչում էր իր կողմը, որպեսզի ուսուցիչ կարգի իր ցեղի վրա: Եվ անա մինչև օրս նրանք այնտեղ են»:

Սույն հատվածի նորագույն թարգմանություններում և մեկնաբանություններում տեղ են գտել որոշ թյուրիմացություններ, որոնցից երկուսի պարզաբանումը էական նշանակություն ունի բնագրի ներքին տրամաբանությունն ըմբռնելու համար:

Առաջինը վերաբերում է մեջբերված հատվածի երկրորդ պարբերության սկզբնամասին (d-mn btr d-'lt šbyt' d-mn byt rhwmy' d-'lw hwny' w-hww b-'trhwn tltyn w-'rb' šnyn 'txzy dyn ml'k' l-'nš d-šmh Qrdwš...)⁶, որը ժամանակագրության թարգմանիչները⁷ հասկացել են այսպես.

1. After the coming of the captives from the land of the Romans, whom the Huns had taken away with them, and after they had been in their country for thirty-four years, then an angel appeared to a man named Kardutsat... (*Hamilton-Brooks*, p. 329).

2. Postquam captivitas quae de terra Romanorum abducta erat quos Hunni introduxerunt ingressi essent et in terra eorum triginta quattuor annos fuissent, viro culdem cui nomen Qardušat episcopo regionis Arrān angelum apparuisse... (*Brooks*, „CSCO“ 88, p. 145).

3. После того как вывели пленных из пределов ромеев и ввели к гуннам и они оставались в их земле тридцать четыре года, явился ангел человеку, по имени Кардост... (*Пигулевская*, Сирийские источники..., стр. 166).

4. Հոռոմների երկրից գերիները տանելուց հետո, հոները մեզ գնեցին ու տարան իրենց հետ, և այգտեղ էլ մնացինք 34 տարի. ապա մի հրեշտակ երևաց Կարդոստ անունով մի մարդու... (Մելիքյան)⁸:

Թարգմանիչներն այսպիսով անուշադրության են մատնել այն հանգամանքը, որ նման մեկնաբանությունը հակասում է բնագրի նախորդ նախադասությանը, որտեղ պարզորոշ ասված է, որ գերիները Հոնաց աշխարհում մնացել են ավելի քան երեսուն տարի: Եթե ընդունենք, որ Աղվանից քահանաները Հոնաց աշխարհ են ժամանել հոռոմացիների գերեվարությունից 34 տարի հետո, ապա նրանց գերության ժամկետը կձգվի առնվազն 57 տարի. այդ 34 տարիներին պետք է գումարել քահանաների քարոզչության 7 տարիները, ապա՝

⁶ Zacharias Rhetor, „CSCO“ 84, p. 215.

⁷ Դժբախտաբար մեր ձեռքի տակ չենք ունեցել բնագրի գերմաներեն թարգմանությունը. Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor in deutscher Übersetzung, herausgegeben von K. Ahrens, G. Krüger, Leipzig, 1899. Ինչ վերաբերում է Ն. Ադոնցի, Մ. Աղավնունու և Հ. Քյուրտյանի թարգմանություններին (տե՛ս ծան. 3), ապա նրանք չենք մեջբերում, որովհետև երեքն էլ կատարված են ոչ թե անմիջականորեն ժամանակագրության ասորերեն բնագրից, այլ Համիլտոն—Բրուքսի անգլերեն թարգմանությունից:

⁸ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8. Ասորական աղբյուրներ, Ա», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 315:

մինչև Մակար եպիսկոպոսի առաքելությունն ընկած ժամանակամիջոցի 14 տարիները և վերջինիս գոնե 2 տարվա գործունեության ժամանակը: Մինչդեռ հայտնի է, որ հռոմեացիները գերության էին քշվել 502/3 թ., իսկ քննության առարկա հատվածը հեղինակի իսկ վկայությամբ գրված է 555 թ.⁹, այսինքն՝ գերեվարումից 52—53 տարի հետո: Ժամանակագրության գերմաներեն բնագրի թարգմանիչները հակասությունը լուծելու համար 34-ը ուղղում են 3—¹⁰ Սակայն դրա անհրաժեշտությունը չկա, որովհետև մեր առաջարկած թարգմանությամբ ժամանակագրական անհամապատասխանությունները ինքնրստինքյան վերանում են: Ստորև կտեսնենք, որ գա հաստատվում է նաև Պրոբոսի դեսպանագնացության հանգամանքների քննությամբ:

Երկրորդ քյուրիմացությունը, որի պարզաբանումն ավելի կարևոր նշանակություն ունի, տեղ է գտել Ն. Ադոնցի, Ն. Պիգուլևսկայայի, է. Շտայնի և Ա. Վասիլևի հետազոտություններում¹¹: Նրանց մոտ իրողությունը ներկայացված է այնպես, որ իբր շոնաց աշխարհի քարոզությանը անձամբ մասնակցել է նաև Կարդոստը: Սակայն ինչպես մեր, այնպես նաև Ֆ. Համիլտոնի, Ե. Բրուքսի և Հ. Մելքոնյանի թարգմանությունները հիմք չեն տալիս նման եզրակացության համար: Հատվածից պարզ երևում է, որ Աղվանքից շոնաց աշխարհ են ժամանել հրեշտակի հայտնության ժամանակ Կարդոստին ընկերակցող երեք քահանաները և նրանց միացած շորս այլ անձնավորություններ՝ ընդամենը յոթ հոգի: Հեղինակը հարկ է համարում նույնիսկ շեշտել այս թիվը. «այս յոթ քահանաներն ամեն երեկո գտնում էին մի օթևան, յոթ նկանակ և մի կուժ ջուր»։ Ուստի եթե Կարդոստը ընկերակցած լիներ նրանց, ապա պետք է լիներ ութերորդ անձը: Պատահական չէ, որ է. Շտայնը հակասությունից խուսափելու համար կրճատում է քահանաներից մեկին. ըստ նրա՝ Կարդոստը շոնաց աշխարհ էր գնացել վեց քահանաների ուղեկցությամբ¹², Այս հարցը նույնպես փակված համարելով՝ անցնենք բուն նյութի քննությանը:

Ասորի բանաբաղի սույն հատվածի ժամանակագրական տվյալների պարզաբանման տեսակետից կարևոր նշանակություն ունի Պրոբոսի դեսպանագնացության հանգամանքը, որի վրա, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Ն. Ադոնցը¹³: Այդ դեսպանագնացության մասին Պրոկոպիոս Կեսարացին տալիս է հետևյալ ընդարձակ տեղեկությունը.

Կավատ արքան վրաց Գուրգեն թագավորին պարտադրում է ենթարկվել զրադաշտական օրենքներին: Գուրգենը չի հնազանդվում և դիմում է Հուստինոս կայսեր օգնությանը: Վերջինս Պրոբոս պատրիկին՝ նախորդ կայսր Անաստասիոսի եղբորորդուն, մեծ գումարով ուղարկում է Ղրիմի հոների մոտ՝ նրանցից ղինվորներ վարձելու և վրացիներին օգնելու նպատակով: Սակայն նրա դեսպանագնացությունն անհաջող է ավարտվում և նա այնտեղից վերադառնում է ձեռնունայն: Կայսրը վրացիներին օգնության է ուղարկում Պետրոս զո-

⁹ Zacharias Rhetor, „CSCO“, 84, p. 213: Այս փաստը թվագրված է Հուստինիանոս կայսեր 28-րդ տարով, Սելևկյան 866 թվականով և 333-րդ օլիմպիադով:

¹⁰ Հմմտ. Н. Пигулевская, Сирийские источники..., стр. 166.

¹¹ Տե՛ս ծանոթագրություն 3:

¹² Տե՛ս E. Stein, Iustinus I, S. 1326.

¹³ Տե՛ս Ն. Ադոնցի. նշվ. աշխ., էջ 269:

րավարին՝ հոների մի փոքրաքանակ խմբով: Սակայն Գուրգենը չի դիմանում Կավատի հարձակմանը, իր ընտանեկիցների և մեծամեծների հետ փախչում է Լաղիկա, իսկ որոշ ժամանակ անց՝ տեղափոխվում Կոստանդնուպոլիս¹⁴:

Վրաց ապստամբությունը պատմաբանները թվագրում են 523 թ.¹⁵, ուստի պետք է ենթադրել, որ Պրոքոսի դեսպանագնացությունը տեղի է ունեցել 522/3 թ.: Ելակետ ընդունելով այս թվականը՝ կարող ենք մոտավորապես հաշվարկել նաև մյուս ժամանակագրական տվյալները: Կեղծ-Ջաքարիայի պատումից երևում է, որ Պրոքոսը Հոնաց աշխարհ էր ժամանել Աղվանից քահանաների գործունեության վերջին տարիներին, երբ նրանց շուրջը արդեն մեծ համբավ էր ստեղծվել: Նկատի ունենալով, որ այդ քահանաները Հոնաց աշխարհում մնացել են յոթ տարի, նրանց առաքելության սկիզբը կարելի է համարել 516/7 թ., իսկ ավարտ՝ 523/4 թ.: 14 տարի հետո, այսինքն՝ 537/8 թ., Հոնաց աշխարհ է ժամանել Մակար եպիսկոպոսը և առնվազն 2 տարի, մինչև 539/40 թ., հոռմեացի գերիները ականատես են եղել նրա գործունեությանը, ապա միայն վերադարձել հայրենիք: Այսպիսով նրանց գերեվարումից մինչև ազատագրումը ստացվում է մոտ 36—37 տարի, մինչդեռ վերը նշեցինք, որ ըստ հեղինակի՝ գերիները Հոնաց աշխարհում մնացել են ընդամենը 34 տարի: Դա թերևս պետք է բացատրել նրանով, որ նրանք հավանաբար 2—3 տարի ուղևորվել են Պարսկաստանում, ապա միայն վաճառվել հոներին: Մնում է պարզել միայն մի ժամանակագրական հակասություն. խնդրո առարկա հատվածի առաջին իսկ նախադասությամբ հեղինակը տեղեկացնում է, որ հոնաց դպրությունն ստեղծվել է «մոտ քսան և ավելի տարիներ առաջ»: Բնական է մտածել, որ նրա ելակետը սույն հատվածի գրության ժամանակն է, այսինքն՝ 555 թ., որից եթե ետ գնանք 20 տարի, կստանանք 535 թ., մինչդեռ մեր հաշվումներով այդ իրադարձությունը վերաբերում է 520—524 թթ.: Պրոքոսի դեսպանագնացության հանգամանքը ցույց է տալիս, որ ժամանակագիրն իր այդ հաշվում պարզապես սխալվել է կամ ելակետ է ընդունել այն ժամանակը, երբ պատմությունը լսել է գերությունից վերադարձած ասորիներից: Մյուս կողմից, «քսան և ավելի տարիներ» արտահայտությունը այնքան անորոշ է, որ կարող է հասկացվել նույնիսկ մոտ 30:

Հատվածի պատմագիտական արժեքավորումը դուրս է սույն հոդվածի ծրագրից: Այդ հարցով հետաքրքրվողները կարող են դիմել Ն. Ադոնցի, Ն. Պիգուլևսկայայի, Ա. Վասիլևի և Բ. Ուլուբաբյանի հիշատակված աշխատություններին: Հոնաց աշխարհի լուսավորությունը տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է միայն մի տեսանկյունից՝ մաշտոցյան ավանդների վերհանման առումով, որի վրա առաջին անգամ հարցադրման կարգով ուշադրություն է հրավիրել Ա. Մնացականյանը¹⁶:

14 Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, «Փոքր աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5. Բյուզանդական աղբյուրներ, Ա», թարգմանություն Բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրա. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 28—29:

15 Տե՛ս Очерки истории СССР, III—XI вв., М., 1958, стр. 251. «Վրաստանի պատմության ակնարկներ», հատ. 2, Թբիլիսի, 1973, էջ 247 (վրացերեն): Ըստ Ա. Վասիլևի՝ բյուզանդա-իրանական հակամարտությունը Իբերիայի խնդրում սկսվել է 524 թ., տե՛ս А. Васильев, Justin..., p. 269.

16 Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 150—152:

Ինչպես հայտնի է, Մաշտոցը նշանակալից գործունեություն է ծավալել Հայոց արևելից կողմերում և Աղվանքում՝ հանդես գալով որպես դպրության հիմնադիր, քրիստոնեության քարոզիչ և արդյունաշատ վարդապետ, որ պատրաստել է բազմաթիվ աշակերտներ: Այդ մասին ընդարձակ տեղեկություններ են հաղորդում V դարի պատմիչներ Կորյունը և Խորենացին¹⁷, որոնց հանրահայտ վկայությունները ավելորդ ենք համարում մեջբերել: Մաշտոցի առաքելությունն այդ կողմերում անջնջելի հետք է թողել նաև հետագա սերունդների հիշողության մեջ: Տեղում ստեղծվել են զրույցներ ու առասպելներ, որոնք շրջանառության մեջ են եղել ողջ միջնադարում, ընդհուպ մինչև անցյալ դարի վերջերը:

Տեղական ավանդության առաջին գրառումը կատարել է Մովսես Կաղանկատվացին դեռևս VII—VIII դդ.: Վերջինս Աղվանից կողմերում Մաշտոցի ծավալած գործունեությանն անդրադառնում է երկու անգամ, և այդ երկու դրվագները բովանդակությամբ բավականին տարբերվում են իրարից: Առաջին պատումը¹⁸, Ա. Մարտիրոսյանի դիտումով¹⁹ ծագում է տեղական ավանդույթից, իսկ երկրորդը²⁰ կազմված է բացառապես Խորենացու տվյալների հիման վրա և այդ առումով որևէ նորություն չի բերում: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում առաջին դրվագը. որը, անհրաժեշտությունից դրված, ստորև բերում ենք ամբողջությամբ.

«Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի՝ բարբառոսական ազգք կողմանցն արևելից վերստին ի դիցախելառ կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս ատրուշանաց կատարելով՝ յարուցին հալածանս ի վերայ քրիստոնէից: Մի ոմն ի նախեղելոց վարդապետաց, որ ի Հոգւոյն Սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգաց առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց, և այնուհետև ի սուրբն երթայր յսրուսաղէմ՝ մատուցանել ուխտադրութիւն, անտի դարձեալ աշակերտօքն՝ ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն ոսկեխաղաց տեսակաւ, յորում ի տէրունեան խաչէն էր մասնաւորեալ, և անցեալ ընդ Հայաստան՝ ճանապարհ առնէ հասանել ի սահմանս արևելից ի գաւառն Ուտիական. և մտեալ բնակէր և ճաղճաղուտ տեղիս և ի լօռաբոյս մօրս, առ տեղեան՝ որում Գիսն կոչեն: Եւ նորոգեալ զեկեղեցւոյ հաւատս հաստատէր. և ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց, և յԱղուանս և ի Լփինս և ի Կասպս և ի Դուռն Զորայ և յայլ ազգի ազգիսն, զորս դերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու. զԳարգառսն և զԿամիճիկ Հեփթաղսն դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ աստուածպաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղնջուց ուսեալն

17 Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Արեղյանի, Երևան, 1941, էջ 70, 72: Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 329: Աղվանից և Բաղասական տշխարհներում Մաշտոցի ձեռնարկած առաքելական գործունեության մասին տե՛ս հետևյալ հմտալից վերլուծությունը, որտեղ հաշվի են առնված նաև Կեղծ-Զաքարիա Հոնտորի տվյալները. Պ. Անանյան, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, «Բազմավեպ», 1965, էջ 206—214:

18 Տե՛ս Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությամբ Մ. Էմինի, Մոսկվա, 1860, էջ 69—70:

19 Սույն միտքն արտահայտված է Ա. Մարտիրոսյանի «Մաշտոց» ձեռագիր աշխատության մեջ, որից օգտվելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում հեղինակին:

20 Տե՛ս Մովսէս Կաղանկատվացի, էջ 90—91:

էին և մոռացեալ. և բոլորովին քարոզ և առաքեալ խուժադուժ սարսափեցնելին ելով, ըստ նոցին բարբառոյ՝ դպրութեան առնէր զնոսա ծանօթս: Եւ անտի դարձեալ ի մօրսն երթեալ բնակէր, զօղեալ ի սպառնալեաց դժնդակ իշխանացն: Եւ անդ յանտառսն ծածկեալ օր ըստ օրէ հաստատէր ղեկեղեցիսն Աստուծոյ: Անդէն ողի մոլորութեան գրգռէր զմիտս գաղանացեալ բռնակալացն՝ զայրագնեալ նոցա և փոյթ կալեալ ի սպանանել զնա: Իսկ երանելոյն Մաշտոցի և Հոգւոյն Սրբոյ ազդեալ՝ փութացեալ փորէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զաստուածայինն առեալ գանձ, որ է խաչն տէրունեան՝ եղեալ և տապանի ծածկէր ի գետնափոր կայանին: Եւ այնուհետեւ հաւատարիմ և զուգակրօն աշակերտքն միաբան յազօթս և ի խնդրուածս ապաւինեալ՝ միմեանց կամաւ յերկուս բաժանէին ջոկս. կէսք ի կողմանս գաւառացն ելեալ խորհէին, և կիսոցն բաղում աշխարհս հատեալ՝ անցեալ քարոզէին զհաւատս»²¹:

Սույն դրվագին մենք դեռ կանդրադառնանք, իսկ առայժմ շարունակենք Մաշտոցի անձի շուրջը հյուսված ավանդությունների թվարկումը: Գիսի խաչից բացի նրա անվան հետ է կապվում նաև Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների սահմանագլխին գտնվող Գագայ Սուրբ Սարգսի և Սուրբ Խաչի վանքի ավանդությունը²². «Գագ, անուանի բերդ և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ,— գրում է Վարդան Արեւելցին,— ուրկայ հռչակաւոր և սուրբ ուխտն Խաչ և եկեղեցի յանուն Սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպբայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած»²³: Նույն տեղեկությունը մասնակի փոփոխություններով կրկնվում է նաև Հայսմավուրքում, Շարակնոցում, ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու և Մաղաքիա Աբեղայի «Պատմություններում»: Այս տվյալները հանգամանորեն ներկայացված են Հ. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ²⁴: Ուշագրավ է, որ նշված երեք հեղինակներն էլ՝ և՛ Վարդանը, և՛ Կիրակոսը, և՛ Մաղաքիան, Հայոց արեւելից կողմերից են. դա վկայում է, որ ավանդությունը տարածված է եղել հիմնականում այդ վայրերում:

Հ. Աճառյանը հիշատակում է նաև մի այլ ավանդություն, գրառված XIX դարի վերջերին, ըստ որի՝ Շամախու մոտ գտնվող Սուրբ Ստեփանոս վանքը նույնպես հիմնադրվել է Մաշտոցի ձեռքով²⁵: Նման մի քանի ավանդություններ էլ, ինչպես՝ Գանձակի Խաչակապ գյուղի մոտ գտնվող Թարգմանչաց վանքի կամ Բագավանի բերդի պատմությունները, որոնք ևս Աղվանքում Մաշտոցի ծավալած գործունեության արձագանքն են, բերում է Ա. Ղանալանյանն իր «Ավանդապատում» գրքում²⁶:

Այս ավանդություններում և մասնավորապես Կաղանկատվացու «Պատմության» մեջ Մաշտոցը հանդես է դալիս ոչ թե սոսկ որպես դպրության հիմնադիր, այլ մեծ լուսավորիչ և առաքյալ, որի շնորհիվ քրիստոնեական վար-

21 Նույն տեղում, էջ 69—70:

22 Վանքի մասին տե՛ս Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 217—218

23 «Հատարումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 145:

24 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 236—237:

25 Նույն տեղում, էջ 220:

26 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, ավանդություններ №№ 269 (632), 566: Թարգմանչաց վանքի մասին տե՛ս Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 135—136:

գապետությունը վերջնական հաղթանակի է հասնում Աղվանքում: Մաշտոցի պահպանած խաչի գյուտի առիթով նույնպես Կաղանկատվացին չի զլանում շեշտել այս հանգամանքը. «Ակն յայտնի վնորոգափայլ խաչն Քրիստոսի տեսանէին, որ սրբոյ Մաշտոցի իւր իսկ ձեռացն լեալ էր, որով դարձուցանէր զաշխարհս Աղուանից ի կոոցն մոլորութենէ լուսածնութեամբ աւազանին շնորհաց»²⁷: Մի այլ տեղ՝ Մաշտոցի մեծությունն ընդգծելու համար Կաղանկատվացին նշում է, որ վերջինիս մահից հետո Արևելից կողմերի աշակերտները շվարած հարցնում են. «Հի՞նչ մեք արասցուք, ասեն, զի որ մեր լուսաւորութեանն էր առիթ, ննջեաց ի Քրիստոս, և ահա ի նմանէ մնացեալ եմք որք»²⁸:

Նշված փաստերը վկայում են, որ Մաշտոցը հանդիսացել է Հայոց արեւելից կողմերի և Աղվանքի հնագույն շրջանի պատմության մեծագույն հեղինակությունը: Դա հիմք է տալիս Հոնաց աշխարհի առաքելությունը կապելու նրա անվան հետ: Անշուշտ, նման հարցադրումը առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, որովհետև հիշյալ առաքելությունն իրականացել է Մաշտոցի գործունեությունից մոտավորապես հարյուր տարի հետո: Ստորև բերվող փաստարկները, սակայն, թվում է, ի վիճակի են փարատելու հնարավոր տարակույսները:

Կաղանկատվացու վերը բերված ընդարձակ քաղվածքի վերջում նշվում է, որ Մաշտոցի աշակերտների մի մասը, նրա մահից հետո անցնելով այլ աշխարհներ, քարոզում է քրիստոնեական հավատը. «Եւ կիսոցն քաղում աշխարհս հատեալ անցեալ քարոզէին զհաւատս»²⁹: Որո՞նք էին այդ աշխարհները. իհարկե, ո՛չ Աղվանքի հարավ-արևմտյան և արևմտյան հարևանները՝ Հայաստանը և Վրաստանը, որոնք անհամեմատ ավելի լուսավոր էին, քան Աղվանքը: Բացառվում է նաև այդ քարոզիչների գործունեությունը հարավում՝ Պարսից տերության սահմաններում, քանի որ քրիստոնեական քարոզությունը մեկ անգամ ընդմիշտ արգելված էր Սասանյան արքունիքի կողմից: Դրա վկայությունն են բազմաթիվ այն վարքադրական հուշարձանները, որոնց հերոսները քրիստոնեություն ընդունած և այդ պատճառով մահապատժի ենթարկված զրադաշտականներն են: Մնում է միայն հյուսիսը՝ Կովկասյան լեռների մյուս կողմը, այսինքն՝ Ալանաց և Հոնաց երկիրը: Մասնավորապես այդ է թելադրում նաև Աղվանքից ծագած հետագա առաքելությունների տրամաբանությունը, որոնք ընթացել են բացառապես նշված ուղղությամբ:

Կաղանկատվացուց հայտնի է, որ VII դարի վերջում Հոնաց երկրի Վառաշան մայրաքաղաքում քրիստոնեության քարոզությամբ է զբաղվում նաև Արցախի Մեծկողմանք գավառի Տեր Իսրայել եպիսկոպոսը³⁰: Եվ ուշագրավն այն է, որ վերջինիս անունը նույնպես կապվում է Մաշտոցի հիշատակի հետ: Տեր Իսրայելն է, որ հայտնաբերում է Մաշտոցի օրհնած և թաքցրած խաչը

²⁷ Մ ո վ ս ե ս Կ աղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 175:

²⁸ Նույն տեղում, էջ 71:

²⁹ Նույն տեղում, էջ 70:

³⁰ Նույն տեղում, էջ 188—211. Ն. Ակինյանը Տեր Իսրայելի ուղևորությունը Հոնաց երկիր թվագրում է 681/2 թ. (տե՛ս Ն. Ակինյան, Մովսես Դաւիթուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմության Աղվանից, Վիեննա, 1970, էջ 268):

Գիս բնակավայրում. «Սակս նախագուշակ հրամանին, որ ի վերուստ եղև նմա՝ զաղդումն ցանկութեան յոյժ ունէր սուրբ երէցն խնդրել զփափագելի խաշն՝ ղծածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ գիւղն, որ յՍուտի գաւառի»³¹:

«Եւ կիսոցն բազում աշխարհս հատեալ անցեալ քարոզէին զհաւատս» խոսքերը կամ վերաբերում են Հոնաց աշխարհի մի անժանոթ առաքելության կամ էլ, որ ավելի հավանական է, արձագանքն են Կեղծ-Ջաքարիայի նկարագրած իրադարձությունների: Զարմանալի չէ, որ Կաղանկատվացու մոտ այդ իրադարձությունները կապվեին Մաշտոցի աշակերտների գործունեության հետ, որովհետև հնագույն շրջանի պատմության համար նրա ժամանակագրական տվյալները բավականին անորոշ են: Իրականում դրանք կարող էին լինել Մաշտոցի աշակերտների աշակերտները, որոնց համար Մաշտոցի անունը դեռևս նույնքան նվիրական պետք է լիներ, որքան իրենց անմիջական ուսուցիչների համար: Հիշեցնենք, որ ոչ միայն VI դարում, այլ հետագայում էլ Մաշտոցը Հայոց արևելից կողմերում և Աղվանքում մեծ հեղինակություն է հանդիսացել: Վաղ շրջանում՝ V—VI դդ., բնականաբար տուրքավորություններն ավելի թարմ, իսկ զրույցներն ավելի կենդանի են եղել:

Նույն Կաղանկատվացին պատմում է, որ Մաշտոցի մահից որոշ ժամանակ անց նրա աշակերտներից ոմանք գնում են Երուսաղեմ և այնտեղ տարածում իրենց ուսուցչի համբավը. «Եւ զջան քրտանց սրբոյն Մաշտոցի բովանդակ պատմէին առաջի սրբոյ հայրասպետին, եթէ՝ զինչ գունակ սքանչելօք առ բարբարոսականսն կատարեալ լինէին ուղղութիւնք»³²: Քանի որ Հոնաց աշխարհի քարոզիչները Մաշտոցի՝ թեկուզ ոչ անմիջական, աշակերտները պետք է լինեին, բնական է, որ նրա մասին պատմեին նաև այնտեղ: Ասորի ժամանակագիրը նույնպես նշում է, որ Աղվանքից Հոնաց աշխարհ եկած քարոզիչները պատմել են Կարդոստ անունով մի եպիսկոպոսի մասին, որպիսի պատվի արժանանալու համար վերջինս պետք է մեծ համբավ վայելած լիներ իր հայրենիքում: Դրա վկայությունն է այն մենաշնորհը, որ Տիրոջ հրեշտակը երկու անգամ նրան է հայտնվում և նրան է հաղորդում աստվածային պատգամները: Տվյալ դեպքում մենք գործ ունենք, իհարկե, առասպելախառն իրողության հետ: Ի դեպ, սույն դրվագում «հրաշապատում և առասպելական տարրի» առկայությունը ընդգծել է նաև Ա. Վասիլևը³³: Ակնհայտ է, որ Կարդոստն այնպիսի մեծ հեղինակություն է եղել, որի շուրջը հյուսած առասպելով Աղվանից քարոզիչները Հոնաց աշխարհում փորձել են ապացուցել իրենց առաքելության երկնաշնորհությունը:

Կարդոստի անզուգականության մի արտահայտությունն էլ նրա անվան ստուգաբանությունն է, որ տալիս է հեղինակը երկու լեզվով՝ հունարեն և ասորերեն. «Կարդոստը... հունարեն թարգմանվում է Թեոկլետոս (Θεοκλῆτος), իսկ արամեերեն՝ Աստվածակոչ (Qarē l-'allāhā)»³⁴: Հենվելով այս ստուգաբանության վրա՝ բնագրի անգլիացի թարգմանիչներ Ֆ. Համիլտոնը և

31 Մ ո վ ս ե ս Կ աղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 171:

32 Նույն տեղում, էջ 72:

33 Տե՛ս A. Vasiliev, Justin..., p. 251.

34 Ինչպես նկատել է Ն. Ադոնցը, այս անունը ավելի շատ մականվան տուրքավորություն է թողնում. տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 270:

Ե. Բրուքսը Կարդոստ անունը բացատրում է որպես հայերեն կարդալ և աստուած բառերից կազմված բարդություն³⁵։ Սակայն, ինչպես իրավացիորեն առարկում է Ն. Ադոնցը, «հայերեն այդպիսի բառ չկա և բարդությունն իսկ հայացի չէ»։ Այդ պատճառով նա ավելի հավանական է համարում «ենթադրել, որ Qardost բառի մեջ առաջին երկու տառերը աղավաղված են և պետք է կարդալ Asdos̄t (Աստուածատուր)»³⁶։ Մենք նույնպես չենք կասկածում, որ Կարդոստ անունն աղավաղված է, սակայն Ն. Ադոնցի ուղղումը մեզ բռնազբոսիկ է թվում, որովհետև նրանում հաշվի չի առնված, որ Աստուածատուր և Կարդոստ բառերը դրչականորեն բավականին տարբերվում են իրարից։

Շատ ավելի աննշան գրչական փոփոխությամբ Կարդոստ բառը կարելի է բխեցնել մի այլ հայերեն անունից։ Ասորական ձեռագրերում հաճախակի է զ և Մ տառերի շփոթությունը, դժվար չէ շփոթել նաև Դ և Զ տառերը, որոնք իրարից տարբերվում են միայն մի չնչին ելուստով։ Նկատի ունենալով այս հանգամանքը՝ կարծում ենք, որ Կարդոստ աղավաղված անվան տակ թաքնված է Մաժդոց անունը։ Բառապատկերների համադրությունը միանգամայն արդարացնում է այսպիսի նույնացումը։

ܩܪܕܝܬ = QARDOST

ܡܙܕܝܬ = MAZDOST

Մաժդոց անվան ասորական տառադարձության մեջ, ինչպես տեսնում ենք, համարժեքների բացակայության պատճառով հայերեն օ հնչույթը վերարտադրված է Զ-ով, իսկ ց-ն st (*<ts) տառակապակցությամբ։ Երկու դեպքի համար էլ կարելի է զուգահեռներ գտնել ասորական այլ բնագրերում։ Այսպես, Անանուն Եղեսացու (XIII դար) «Ժամանակագրության» մեջ հայ զորավար Մժեժի անունը վկայված է Mzyzyz ձևով³⁷։ Նույն ժամանակագիրը հիշատակում է նաև վրացի հայերեն բառը, որտեղ ց-ն վերարտադրվել է st (*<ts) տառերի միջոցով (Vrastayē=Vraçāyē)³⁸։

Բացառված չէ, որ ասորական բնագրում մենք դործ ունենք Մաշտոց անվան ավելի նախնական՝ Մազդոց ձևի հետ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ նրա ամենահավանական ստուգաբանությունը կապվում է Մազդ

³⁵ Տե՛ս The Syriac Chronicle..., p. 329.

³⁶ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 270։ Նույն կարծիքին է նաև Մ. Աղավնունին (տե՛ս Մ. Աղավնունի, նշվ. աշխ., էջ 335)։ Լ. Քյուրտյանը առաջարկում է կարդալ շատ կամ Կարդաս շատ բնթերցումը (տե՛ս Լ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 251)։

³⁷ Chronicon ad annum Christi 1234 pertinens, I. Edidit J.-B. Chabot. Praemisum est Chronicon Anonymum ad A. D. 819 pertinens. «CSCO» 81, Syr. 36, Louvain, 1920, p. 287.

³⁸ Anonymi auctoris Chronicon ad annum Christi 1234 pertinens, II. Edidit J.-B. Chabot. «CSCO» 82, Syr. 37, Louvain, 1916, p. 84. Ծիշտ է, ասորերեն s և օ հնչյունները փոքր-ինչ տարբեր արժեքներ ունեն, սակայն տվյալ դեպքում դրանից ըստ էության չի լինի չի փոխվում։

(Արամազդ) աստվածային անվան հետ³⁹։ Ընդ որում Մաշտոց անվան Մագդալաշտ (Արամազդի հետևորդ) ստուգաբանությանը ոչ միայն չի հակասում, այլ, ընդհակառակն, թերևս ավելի է նպաստում Կեղծ-Չաքարիա Հոնատորի տված «Աստվածակոչ» բացատրությունը, որը համարյա նույն բովանդակությունն ունի։

Հանգամանքների համակողմանի քննությունն, այսպիսով, ցույց է տալիս, որ Հոնաց աշխարհի քարոզությունը ոչ թե առանձին հոգևորականների կողմից իրագործված պատահական ձեռնարկում է եղել, այլ հանդիսացել է հայոց վաղեմի քաղաքականության տրամաբանական շարունակությունը։

V դարի սկզբում քրիստոնեությունը դեռևս վերջնականապես չէր արմատավորվել ոչ միայն Վրաստանում և Աղվանքում, այլ նաև բուն Հայաստանի որոշ նահանգներում՝ Դոդթնում և Սյունիքում։ Դա է պատճառը, որ հայոց այբուբենի ստեղծումից և կրթական գործի կազմակերպումից հետո Մաշտոցն ու Սահակն անմիջապես լծվում են այդ կողմերի լուսավորության գործին, եռանդուն պայքար ծավալելով հեթանոսական մնացուկների դեմ։ Ընդ որում այդ առաքելությունն իրագործվում է նպատակասլաց ծրագրով։ Սահակ կաթողիկոսը ստանձնում է Հայաստանի կենտրոնական նահանգների տնօրինությունը, իսկ Մաշտոցին բաժին են ընկնում վերը նշված երկրները. «Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի տէր Եպիսկոպոսն ի կայենականսն, և նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն»⁴⁰։

Ի կատարումն այդ ծրագրի Մաշտոցն սկսում է շրջագայել նշված վայրերում՝ ամենուրեք հոգալով եկեղեցու ամրապնդման, դպրության տարածման և կրթության կազմակերպման գործը։ Նա իջնում է նախ Գողթն, ապա՝ Սյունիք, այնուհետև գնում է Վրաստան, դրանից հետո ուղևորվում Մեծ Հայքի բյուզանդական մասը, վերադառնալով Արևելյան Հայաստան, անցնում է Աղվանից կողմերը և կրկին այցելում Վրաստան։ Այս պարզ թվարկումն իսկ ցույց է տալիս Մաշտոցի ծավալած գործունեության ընդգրկումը։ Կորյունը հետևյալ խոսքերով է գնահատում իր ուսուցչի անխոնջ աշխատանքը. «Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին»⁴¹։

Դժվար չէ նկատել, որ Մաշտոցի առաքելությունը սոսկ մշակութային-լուսավորական նպատակ չի հետապնդել։ Հայ ժողովրդի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առաջնահերթ խնդիրը պարսից բռնակալության դեմ մի հզոր պատվար ստեղծելն էր, որի համար անհրաժեշտ էր ապահովել Անդրկովկասի ժողովուրդների միասնությունը։ Այդ գործի իրականացումից հետո հայ գործիչները բնականաբար պետք է ձգտեին քրիստոնեական վարդապետությունը տարածել նաև Կովկասյան լեռների մյուս կողմում բնակվող ցեղերի

³⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Շ. Մնացականյան, Մաշտոց անվան ստուգաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 8, էջ 81—93։

⁴⁰ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 60։

⁴¹ Նույն տեղում, էջ 78։

մեջ, որոնք հատնի են ալաններ և հոներ անուններով: Դրանով հայերը մի կողմից բնական դաշնակից ձեռք կրերեին Սասանյան բռնապետության դեմ, մյուս կողմից կարող էին դսպել այդ ցեղերի կործանիչ ասպատակությունները, որոնց ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին անդրկովկասյան երկրները: Հայտնի է, օրինակ, այն փաստը, որ V դարի ազատագրական շարժման ղեկավարները՝ և՛ Վարդան, և՛ Վահան Մամիկոնյանները, փորձել են ռազմաքաղաքական դաշինք կնքել Հյուսիսային Կովկասի ցեղային միությունների հետ⁴²: Նման պարագաներում Հոնաց աշխարհի քարոզությունը, որ նկարագրված է Կեղծ-Զաքարիա Հոնտորի «Ժամանակագրության» մեջ, ներկայանում է որպես հայոց դարավոր քաղաքականության օրինաչափ օղակներից մեկը՝ այդ իմաստով նույնպես հանդիսանալով մաշտոցյան ավանդների շարունակությունը: Բնական է, որ պարսիկներն ամեն կերպ պետք է խոչընդոտեին անդրկովկասյան ժողովուրդների և հոների մերձեցմանը: Այդ տեսակետից ուշագրավ է ասորի ժամանակագրի այն տեղեկությունը, որ Աղվանից քահանաները Հոնաց աշխարհ են թափանցում ոչ թե Ճորա պահակի նշանավոր դարպասով, որը գտնվում էր պարսիկների հսկողության տակ, այլ դժվարանցանելի լեռնային կաժաններով:

Այսպիսով, վերը բերված պատմաբանասիրական տվյալները մեզ բերում են այն համոզման, որ VI դարի սկզբում Հոնաց աշխարհի առաքելությունը իրականացրել են Մաշտոցի անմիջական աշակերտների սաները, իսկ Կեղծ-Զաքարիայի «Ժամանակագրության» մեջ Կարդոստ աղավաղված անունով հանդես եկող առասպելական անձնավորությունը նույն Մաշտոցն է⁴³:

Հաստատուն կովանների բացակայության պայմաններում հեռուն տանող անհիմն ենթադրություններից խուսափելու համար չենք ուզում խորանալ Հոնաց այբուբենի ծագման, բնույթի, Մաշտոցի հետ ունեցած առնչության և նման այլ հարցերի քննության մեջ: Համենայն դեպս շատ ավելի հավանական է Հոնաց դպրությունը բխեցնել մաշտոցյան այբուբենից, քան թե «սողդա-մանիքեական կամ սողդական» գրից, ինչպես վարվում է Ն. Պիգուլևսկայան⁴⁴: Թերևս ավելորդ չէ այս առիթով ընդգծել Մաշտոցի և Հոնաց աշխարհի քարոզիչների առաքելական գործունեության եղանակների էական ընդհանրությունը՝ քրիստոնեության տարածումն ու ամրապնդումը տեղաբնակների սեփական լեզվով դպրություն ստեղծելու միջոցով:

42 Տե՛ս «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», աշխատությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 78: Ղ ա ղ ա Ր Փ ա Ր ա Յ ի, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Տփղիս, 1904, էջ 66, 117—119, 126, 132:

43 Կարող է հարց առաջանալ, որ Կարդոստի և Մաշտոցի նույնացմանը խանգարում է առաջինին շնորհված եպիսկոպոս տիտղոսը, քանի որ հայկական աղբյուրները Մաշտոցի եպիսկոպոսության մասին տեղեկություն չունեն: Սակայն այս առթիվ կարելի է հիշել Թեոդորոս Մոպսոսեստացու դիրքը, որտեղ Մաշտոցը հանդես է դալիս Լուեպիսկոպոս տիտղոսով. տե՛ս Ն. Աղոնց, Մաշթոց և նրա աշակերտները լուս օտար աղբյուրների, Վիեննա, 1925, էջ 7:

44 Տե՛ս Н. Пигулевская, Сирийские источники..., стр. 87. Մենք ուշադրության արժանի ենք համարում նաև Ն. Ակինյանի կարծիքը Մաշտոցի կողմից ալանների համար այբուբեն ստեղծելու մասին, թեև թերափաստությամբ վերաբերվելով դրանից բխող մյուս ենթադրություններին. տե՛ս Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, կյանքն ու գործունեությունը հանդերձ կենսագրությամբ Ս. Սահակ, Վիեննա, 1949, էջ 338:

ТРАДИЦИИ МАШТОЦА
И АРМЯНСКАЯ МИССИЯ В СТРАНЕ ГУННОВ

Кандидат филол. наук Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

(Резюме)

В статье сделана попытка по-новому осветить известную глазу «Хроники» Псевдо-Захарии Ритора о деятельности армянских духовных лиц в прикаспийских областях Северного Кавказа в первой половине VI в. По рассказу хронографа, усилиями этих миссионеров была создана гуннская письменность и часть гуннов обратилась в христианство. Сопоставление этого рассказа со сведениями армянских историков, в частности Мовсеса Каланкатуаци, позволяет связать деятельность упомянутых священников с традициями Маштоца, крупнейшего культурного деятеля Армении V в.